[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
12	Հունիս	2018 թ.		U	4931072200
[4] Մատակարարման ամսաթիվ					
12	Հունիս	2018 թ.			

Ճշգրտվող հաշվի	
Սերիա	Համար

Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ		

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	1	5	0	3	4	4	8		
[9] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ									
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	1	5	0	3	4	4	8	/	1
[11] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ				N 11500166513800					
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կոթյունի 2									
[13] Լրացուցիչ տվյալներ										

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3		
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ									
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն				N 900011000834					
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5									
[19] Լրացուցիչ տվյալներ										
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն									
	Լիազորագիր	Համար								
		Ամսաթիվ								

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (ծանոթագրություն 2 դրամ)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	68110217 դատահոգեբանական փուլաքննություն	հատ	1	32833.33		32833.33	20	6566.67	39400
Ընդամենը						32833.33	X	6566.67	39400

Դուրս գրող PARSEGHYAN LARISA 6808700354
անունը, ազգանունը

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

12/06/2018 14:27:41

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ամբուլատոր դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն նշանակելու մասին

« 19 » դեկտեմբերի 2017թ. ք. Գյումրի

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ, արդարադատության կապիտան՝ Շ.Վ.Իկիլիկյանս, քննարկելով վարույթիս թիվ 68110217 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2017 թվականի դեկտեմբերի 10-ին, ժամը 14:10-ին «Գյումրի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից ահազանգ է ստացվել ՀՀ ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժին այն մասին, որ բժշկական կենտրոն բուժօգնության է դիմել Գյումրի քաղաքի Այգաբաց փողոցի 5-րդ շարքի 1-ին տան բնակիչ, 19.01.1987թ. ծնված Արտյոմ Հովհաննեսի Տոնոյանը՝ «կրծքավանդակի ձախ կեսի հետին մակերեսի թափանցող վերք, հեմաթորաքս» ախտորոշմամբ:

Փաստի առթիվ 2017 թվականի դեկտեմբերի 10-ին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 68110217 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:

Քրեական գործի նախաքննության ընթացքում տեղեկություններ են ստացվել, որ Արտյոմ Հովհաննեսի Տոնոյանին մարմնական վնասվածքը պատճառել է Գյումրի քաղաքի Կոմիտաս փողոցի 52 տան բնակիչ, 16.05.1998թ. ծնված Ռաֆիկ Ռուդիկի Մարգարյանը:

2017 թվականի դեկտեմբերի 11-ին ժամը 18:20-ին Ռաֆիկ Ռուդիկի Մարգարյանը ինքնակամ ներկայացել է ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժին և հայտնել, որ ինքն է դանակով հարվածել և մարմնական վնասվածք պատճառել Արտյոմ Տոնոյանին:

2017 թվականի դեկտեմբերի 11-ին ժամը 21:20-ին Ռաֆիկ Ռուդիկի Մարգարյանը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու կասկածանքով ձերբակալվել է և կարճաժամկետ արգելանքի վերցվել «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ում:

2017 թվականի դեկտեմբերի 14-ին քրեական գործով Ռաֆիկ Ռուդիկի Մարգարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ նա 2017 թվականի դեկտեմբերի 10-ին՝ ժամը 13:30-ից մինչև 14:00-ն ընկած ժամանակահատվածում, դուրս գալով Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի 86/9 հասցեում գործող «Կանգառ» առևտրի սրահից և տեսնելով Կոմիտաս փողոցում՝ «Եռանկյունի» ռեստորանային համալիրի դիմաց մոր՝ Արմենուհի Վանյայի Պողոսյանի հետ վիճաբանող իրենց թաղամասի բնակիչ Արտյոմ Հովհաննեսի Տոնոյանին, միաժամանակ լսելով վերջինիս կողմից մոր հասցեին կատարվող հայհոյանքները, վազելով մոտեցել է նրան: Այդ ընթացքում Արտյոմ Տոնոյանի ձեռքին նկատելով իր ուղղությամբ պահված դանակը, ոտքով հարվածել և վայր է գցել վերջինիս, ինչի հետևանքով դանակը ընկել է նրա ձեռքից: Այնուհետև վերցնելով դանակը, Արտյոմ Տոնոյանին մարմնական վնասվածք պատճառելու դիտավորությամբ, դանակով մեկ անգամ հարվածել է նրա կրծքավանդակի հետին ձախ մասին և վերջինիս պատճառել «կրծքավանդակի ձախ կեսի հետին մակերեսի թափանցող վերքի, հեմաթորաքս» ձևով մարմնական վնասվածք:

2017 թվականի դեկտեմբերի 14-ին միջնորդություն է ներկայացվել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ մեղադրյալ Ռաֆիկ Ռուդիկի Մարգարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ:

2017 թվականի դեկտեմբերի 14-ին Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանը քննության առնելով միջնորդությունը, նույն օրը որոշում է կայացրել միջնորդությունը բավարարել՝ մեղադրյալ Ռաֆիկ Ռուդիկի Մարգարյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել «կալանավորումը» 2 /երկու/ ամիս ժամկետով:

Միաժամանակ դատարանը բավարարել է նաև մեղադրյալ Ռաֆիկ Մարգարյանի շահերի պաշտպան Արամայիս Հայրապետյանի միջնորդությունը՝ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց ընտրված կալանավորումը գրավով փոխարինելը թույլատրելու մասին, որպես գրավի գումար սահմանելով 500.000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամը:

2017 թվականի դեկտեմբերի 14-ին որոշում է կայացվել մեղադրյալ Ռաֆիկ Մարգարյանին կալանքից ազատելու մասին՝ նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված գրավի գումարը մուծված լինելու հիմքով:

Առաջադրված մեղադրանքում Ռաֆիկ Մարգարյանը իրեն մեղավոր է ճանաչել և կասկածյալ դատավարական կարգավիճակում ցուցմունք է տվել, բնակվում է Գյումրի քաղաքի Կոմիտաս փողոցի 52 տանը ծնողների՝ Ռուդիկ և Արմենուհի Պողոսյանների, եղբոր՝ Երվանդ Մարգարյանի հետ համատեղ, չի աշխատում: Հայրը՝ Ռուդիկ Պողոսյանը 2016 թվականի սեպտեմբերի 10-ին արտագնա աշխատանքի է մեկնել ՌԴ Մոսկվա քաղաք, որտեղից վերադարձել է 2017 թվականի դեկտեմբերի 11-ին: Արտյոմ Հովհաննեսի Տոնոյանին ճանաչում է որպես իրենց թաղամասի բնակիչ, սակայն երբևէ նրա հետ շփում կամ առնչություն չի ունեցել: Վերջինիս անուն և ազգանունը իմացել է, երբ ներկայացել է ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժին, մինչ այդ նրա տվյալները չի գիտեցել: 2017 թվականի դեկտեմբերի 10-ին ժամը 13:30-ից 14:00-ի սահմաններում, կոնկրետ ժամը չի հիշում, մոր՝ Արմենուհի Պողոսյանի հետ դուրս է եկել տանից՝ շուկա գնալու համար: Քանի որ ցանկացել է հեռախոսահամարը լիցքավորել, այդ պատճառով առանձնանալով մորից, գնացել է Կոմիտաս փողոցի վրա՝ Երևանյան խճուղու մոտ գտնվող «Կանգառ» խանութ, իսկ մայրը եկել է իր հետևից: Մտնելով խանութ և տեղեկանալով, որ չեն կարող հեռախոսահամար լիցքավորել, անմիջապես դուրս է եկել խանութից: Դուրս գալուց հետո նկատել է, որ մայրը կանգնած է խանութից մոտ 30 մետր հեռավորությամբ գտնվող «Եռանկյունի» ռեստորանային համալիրի դիմաց և վիճաբանում է իրենց թաղամասի բնակիչ Արտյոմ Տոնոյանի հետ: Տեսնելով այդ ամենը, բարձր ձայնով Արտյոմին ասել է. «այտղա ինչ է եղել, ինչ կա»: Վերջինս պատասխանել է. «արի ասեմ ինչ կա» և միաժամանակ հայհոյանք է կատարել մոր հասցեին: Բարկանալով այդ ամենից, վազել է Արտյոմի ուղղությամբ և նրան չհասած, վերջինիս ձախ ձեռքին ծալովի դանակ է նկատել, որը բացած վիճակում ուղղված է եղել իրեն: Մոտենալով Արտյոմին, ոտքով հարվածել է նրա կրծքավանդակին, ինչի հետևանքով վերջինս վայր է ընկել, իսկ դանակը թռել է նրա ձեռքից: Քանի որ հուզված և բարկացած է եղել Արտյոմի հայհոյանքներից, գետնից վերցրել է դանակը, որով մեկ անգամ հարվածել է վերջինիս կրծքավանդակի հետին ձախ կողմին: Հարվածից հետո Արտյոմը շարունակել է ընկած տեղից ակտիվ գործողություններ կատարել և ձեռքերով հարվածել իր որովայնին և մարմնի տարբեր մասերին: Տեսնելով, որ Արտյոմը հարվածներ է հասցնում իրեն, ոտքով մեկ անգամ հարվածել է նրա գլխին՝ ճակատային հատվածին: Դրանից հետո նկատել է տաքսիների կանգառի մոտից իրենց ուղղությամբ վազող Արտյոմ Տոնոյանի եղբորը՝ Լևոն Տոնոյանին և երկու երիտասարդներին, որոնց չի ճանաչում, նրանց տվյալները չգիտի: Լևոնը և երկու անծանոթ երիտասարդները մոտենալով իրեն, սկսել են ձեռքերով հարվածել մարմնի տարբեր մասերին: Լևոն Տոնոյանը քաշել է իր բաճկոնից, որի հետևանքով ինքը ընկել է գետնին և դանակը թռել է իր ձեռքից: Այդ պահին ձեռքով բռնել է գլուխը՝ պաշտպանվելու համար և մի պահ նկատել է, որ Լևոնը հարվածներ է հասցնում նաև իր մորը, ով այդ ժամանակ ընկած է եղել գետնին: Մի պահ կարողացել է ոտքի կանգնել, սակայն երիտասարդներից մեկը մետաղյա խողովակով հետևի կողմից հարվածել է իր գլխին, որի հետևանքով վայր է ընկել: Այդ պահին մոտեցել են անծանոթ անձինք, ովքեր հարվածողներին հեռու են տարել և ինքը կարողացել է փախնել: Քանի որ վախեցած և հուզված է եղել կատարվածից, տուն չի գնացել, որոշել է գնալ և գիշերը անցկացնել ընկերոջ՝ Վահե Հովհան-

նիսյանի տատի տանը, որը գտնվում է Շիրակի մարզի Ամասիա գյուղում, սակայն հասցեն չգիտի: 2017 թվականի դեկտեմբերի 11-ին ժամը 17:00-ի սահմաններում դուրս է եկել Ամասիա գյուղից, վերադարձել է Գյումրի քաղաք և ժամը 18:00-ի սահմաններում հասնելով տուն, մայրը հայտնել է, որ դեպքի առթիվ քրեական գործ է հարուցվել, ոստիկանության աշխատակիցները իրեն են փնտրում և ինքը պետք է հարցաքննության ներկայանա: Այդ ամենը իմանալով, անմիջապես մոր հետ դուրս է եկել տանից, ներկայացել է ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժին և հաղորդում տվել կատարվածի մասին:

Ընդհանուր առմամբ նույնաբովանդակ ցուցմունք է տվել նաև մեղադրյալ Ռաֆիկ Մարգարյանի մայրը՝ որպես վկա հարցաքննված Արմենուհի Վանյայի Պողոսյանը:

Ստուգմամբ պարզվել է, որ Ռաֆիկ Ռուդիկի Մարգարյանը 2016 թվականի օգոստոսի 24-ից հաշվառման մեջ է գտնվում Գյումրու հոգեկան առողջության կենտրոնի հոգեբուժական ծառայությունում՝ «Վարքի և հույզերի խառը խանգարում» ախտորոշմամբ:

Նկատի ունենալով, որ դատահոգեբուժական և դատահոգեբանական բնագավառին վերաբերող մի շարք հարցերի պարզաբանման համար անհրաժեշտ են հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով 55-րդ, 243-246-րդ և 248-րդ հոդվածների պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 68110217 քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն, որի կատարումն հանձնարարել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի փորձագետներին, նրանց նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին:

2. Փորձագետների պարզաբանմանն առաջադրել հետևյալ հարցերը.

- Ռաֆիկ Ռուդիկի Մարգարյանը նախկինում, դեպքի պահին և ներկայումս հոգեկան հիվանդությամբ տառապել և տառապում է, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի հիվանդությամբ և երբվանից:

- Ռաֆիկ Ռուդիկի Մարգարյանի մոտ հանցագործությունը կատարելու պահին կամ հիմա առկա ե՞ն ժամանակավոր հիվանդագին երևույթներ, հոգեկան գործունեության խանգարումներ, եթե այո՝ ինչպիսիք:

- Ռաֆիկ Ռուդիկի Մարգարյանի մոտ առկա ե՞ն արդյոք հոգեկան պակասություններ, որի հետևանքով նա ի վիճակի չէ ճիշտ ընկալել և վերարտադրել քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները:

- Եթե Ռաֆիկ Մարգարյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա հանցագործությունը կատարելու ժամանակ այդ հիվանդությունը զրկե՞լ է արդյոք նրան իր գործողություններին հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից:

- Եթե Ռաֆիկ Մարգարյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկու՞մ է նրան ներկայումս իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից:

- Հակահիրավական գործողությունները կատարելու պահին Ռաֆիկ Մարգարյանի մոտ հոգեկան ուժող հուզմունքի վիճակ՝ ֆիզոլոգիական աֆեկտ առաջացել է, թե ոչ:

- Ռաֆիկ Մարգարյանը կարող է գիտակցել իր հետ կատարվածի բնույթն ու նշանակությունը:

- Դեպքի ժամանակ Ռաֆիկ Մարգարյանը կարող էր ադեկվատ ձևով ըմբռնել և վերարտադրել իրականությունը և նախաքննության ընթացքում կարևոր հանգամանքների մասին տալ ճիշտ ցուցմունքներ:

- Ռաֆիկ Մարգարյանի անհատական հոգեբանական առանձնահատկությունները կարող էին նպաստել նրա նկատմամբ կատարված անօրինական գործողություններին:

- Ռաֆիկ Մարգարյանը իր տարիքին և կենսափորձին համապատասխա՞ն է ընկալում և վերարտադրում իրականությունը:

- Հաշվի առնելով փորձաքննվողի անհատական և հոգեբանական առանձնահատկությունները, ինտելեկտուալ անձնային զարգացման մակարդակը և հետազոտվող իրավիճակի բովանդակությունը կարո՞ղ էր արդյոք նա հասկանալ իր նկատմամբ կատարված գործողությունների բնույթը և նշանակությունը, կարո՞ղ էր արդյոք ճիշտ բացատրություն տալ կամ կարող է ճիշտ ցուցմունքներ տալ:

- Ռաֆիկ Մարգարյանը մեղսունակ է, թե ոչ:

Փորձաքննության ընթացքում եթե կառաջանան այլ հարցեր, որոնք որոշմամբ չեն առաջադրվել, սակայն դրանց պատասխանը մտնում է փորձագետների իրավասության մեջ ու դրանց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար՝ խնդրվում է պատասխանել նաև այդ հարցերին:

2. Փորձագետների միջնորդությամբ փորձաքննությանը ներկայացնել Ռաֆիկ Ռուդիկի Մարգարյանին և 68110217 քրեական գործի նյութերը:

ՀԿԳ քննիչ՝ **Շ.Իկիլիկյան**